

կերտ: Բարձրագոյն Դուռը լսելով՝ թէ Կաթողիկոսը կ'ուզէ Իտալիա երթալ, զայն Կ. Պոլիս բերել կու տայ: Յակոբ Զուլայեցի Վեդիրին առջեւ կը դանդատի Կարնոյ Բաշայի դէմ: Առաքել Վարդապետին կ'իմացնէ՝ թէ ձմեռը Կ. Պոլիս անցնելէ յետոյ, զարնան Իզմիր պիտի երթայ, ուրկէ կը յուսայ ուղեւորիլ դէպի Հոռոմ, ուր քանիցս փորձած էր մեկնիլ եւ միշտ արգելքի հանդիպած էր, եւ Հոռոմ հասնելով համբուրել Ս. Առաքեալներուն մասունքները, եւ «ողջունել Եկեղեցւոյ Կենդանի, Սուրբ Պետր»:

Ստորեւ կը հայացնենք Յակոբ Կաթողիկոսի նամակին այս լատիներէն թարգմանութիւնը:

«Ծառայ Քրիստոսի Յակոբ Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Պատրիարք Էջմիածնի Մեծ եւ Սբ. Աթոռին, որ կը գտնուի Վաղարշապատ Քաղաքին մէջ եւ որ կառուցուած է լուսով Քրիստոսի նաքտարապետութեամբ, նման երկնքի, հանգունակ դրախտի: Արդ թող մեզմէ ուղարկուի եւ հասնի սիրոյ եւ ողջոյնի նամակը հանդերձ օրհնութեամբ Աստուածային Տէրութեան, մեր հոգեւոր եւ սիրելի որդւոյդ, Առաքել Վարդապետիդ, եւ բոլոր սիրելիներուդ, եւ քեզ ուրախացնէ երկնային ցնծութեամբ. Ամէն: Շնորհիք ընդ քեզ եւ խաղաղութիւն Տիրոջմէ, Հայր Ամենակալ Աստուծմէ, Յիսուսէ Քրիստոսէ եւ Ս. Հոգիէն, Կենդանատուէն եւ Առատապարգեւէն եւ Ամենակարողէն եւ Մարդասիրէն, որ ամէն ինչ ունի առումով. Ամէն: